ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

№ ԴԴ-3-Ե-Ն-6226

« 07 » օգոստոսի 2025թ.

ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ԷԴՈՒԱՐԴ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

(Հասցե՝ ՀԱԼԱԲՅԱՆ Փ. /Շ/ 35/ 49բն ԵՐԵՎԱՆ)

***Հարգելի՛ պարոն Ջավադյան,***

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար ձայնագրառման համակարգերի, լազերային տպիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում հայտարարությունը (Հավելված 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (Հավելված N 1.3) մասնակցի կողմից ներկայացվել են կնքված տարբերակներով, այն դեպքում, երբ հայտում ներառվող փաստաթղթերը հաստատվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

Ընդ որում, եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառվող փաստաթղթերը հաստատվում են լիազորված անձի էլեկտրոնային թվային

ստորագրությամբ, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը (լիազորագիրը):

Վերոգրյալով պայմանավորված, և հիմք ընդունելով << կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը առաջարկում եմ մինչև սույն թվականի **օգոստոսի 8-ը ներառյալ** շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ**
**ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ**

**ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

*Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով*
*գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան*
*Հեռ.՝ (+37410) 511-774*